


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԿԱՆ
Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 „
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 „
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 „
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Ց Է

Rédaction du journal

„Ipravunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեմ տրուիր

ՁՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՉԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ

Պաշտօնական ազդերու տողը (25 անգ.)
10 անգղիս:
Անհատական ազդերու տողը (25 անգ.)
20 անգղիս:
Երեւանցիներէ աւելիի համար 20 0/0
զեղջ:
Փոխարեւոր դրամ կամ նամակա-
դրոշմ որեւի կանխիկ:

Շ Ն ՈՐ Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Մեր սիրելի Կարապետին վաղահաս
մահուան առթիւ եւ յուզարկաւորու-
թեան ատեն մեզ յայտնուած ցաւակ-
ցութեանց եւ երգեցիկ խումբին կող-
մանէ ցոյց տրուած համակրական նշան-
ներուն ինչպէս նաեւ զրկուած պսակ-
ներուն համար, ներկայիս մեր խորին
շնորհակալութիւնը կը յայտնենք:
Հնանկի Միհնատեան
Ռոստոմ, 2 Սեպտ. 1902

ՊՈՒԼԿԱՐԿԱՆ ԵՒ
ԹՐԲԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱՆԱՍԹԸՐ, 10 յիսպտեմ. —
(Էսթ-Ուէսթի թղթակցէն)

Մեր վիշապին վիթրիա քա-
ղաքին յունական հիւպատոսարա-
նին մէջ երկու օր առաջ մեծ կռիւ
մը եւ արեւհեղուծիւն մը պատա-
հեցաւ, ահա թէ ինչպէս. — Մա-
կեդոնական կոմիտէին պատկանող
պուլկարներ Յունաց հիւպատոսա-
րանը մտնելով հայհոյած եւ վերին
աստիճանի ծանր անարգանքներ
ըրած են յունական դրոշակին:
Հիւպատոսարանին պաշտօնեայ յոյ-
ները փորձած են արտաքսել այդ
յանդուգն ինքնակալները, բայց
վերջիններս կը դիմադրեն եւ նոյն-
իսկ յարձակողական դիրք մը կը
բռնեն, ուսկից կը ծագի ահագին
կռիւ մը որուն մէջ երեք պուլկար-
ներ եւ մի յոյն կը սպանուին. զին-
եալ ուժի մը միջամտութիւնը
պէտք եղաւ եւ կռիւը վերջացաւ
մի քանի պուլկարներու ձերբակա-
լութեամբ:

Աթէնք, 11 Սեպտ. — (Էսթ-
Ուէսթի թղթակցէն)

Երէկ Սօփիան պաշտօնապէս
ծանուցուեցաւ Յունաստանի ար-

տաքին գործոց մինիստրին, Մա-
կեդոնական կոմիտէին պուլկար
կառավարութեան կողմէն լուծման
արդէն ծանօթ լուրը: Ծանուցուե-
ցաւ նոյնպէս զօրավար թոնչէֆի
եւ Սիքայիլովօքիի ձերբակալու-
թեան լուրը. — Սիլանիէն մեզ
կիմօցնեն թէ Մակեդոնական կո-
միտէի նախկին պետը՝ Սարաֆօֆ,
վիէննա ապաստանեալ է, ո՛ւր պի-
տի կազմէ եղեր նոր ծրագիր մը
իր ապագայ գործունէութեան հա-
մար: Կըսուի թէ Սարաֆօֆ ահա
գին խումբ մը պիտի պատրաստէ
եւ անոնց զլուխն անցած պիտի
մտնէ Մակեդոնիա: — Տեղեակ
անձնաւորութեան մը ինձ զրկած
նամակ մը կըսէ թէ Սօփիայի զին-
ուորական շրջաններու մէջ մեծ յու-
զում մը կը տիրէ: Մակեդոնական
կոմիտէի գէմ Պուլկար կառավա-
րութեան բռնած ընթացքին պատ-
ճառով, կը հաւատան թէ դժգո-
հութիւնները թիթեցնելու համար
մօտ օրերս զինուորականներէն մէկ
քանիին աստիճանները պիտի բարձ-
րացունին եւ կարգ մը սպաններու
համար ալ տեղափոխութիւն տեղի
պիտի ունենայ:

Կ. ՊՕԼԻՍ, 11 Սեպտ. — (Էսթ-
Ուէսթի թղթակցէն)

Ամենայն օր Սուլթանի կենաց
գէմ նոր դաւադրութիւններ երե-
ւան կելին (.) ասոր համար
Եւլթըզի պահապան զօրքերուն
թիւը կրկնապատուեցաւ. եւ Կ.
Պօլսոյ գաղտնի ոստիկանութեան
եւ լրտեսներու թիւը բազմացաւ:
(Քիչ ատենէն ամբողջ Կ. Պօլսոյ
բնակիչները կ'աւելան ոստի-
կան եւ կ'ամ լրտես պիտի դառ-
նան)...

Մամուլը սաստիկ հակողութեան
տակ է, գրաքննութիւնը բացար-
ձակապէս կարգիլէ Սուլթանի մա-
սին ու եւ բան գրել, իբր երի-
տասարդ թուրք ձերբակալուած մի
քանի երիտասարդներ՝ որոնք իբր
թէ Սուլթանի կենաց գէմ դաւա-
դիր են եղած եղեր, վրոպորի
ձկներուն կեր դարձան: Բոլոր այս
բաներուն համար մտքերը շատ
զրգուած են թուրքիոյ մէջ, կը
վախցուի թէ նոր ԶԱՐԳԵՐ ՏԵ
Հի ունենան Կ. Պօլսոյ մէջ... իբր

հետեւանք այս անտանելի դրու-
թեան:

Արդէն բոլոր պետութիւններու
հիւպատոսները ծանուցադրենքով
իրենց կառավարութեան յայտնե-
ցին թուրքիոյ սարսափելի դրու-
թիւնը եւ փոխադարձ հրահանգներ
ստացան իրենց հպատակներու
պաշտպանութեան համար:

— Գահակալութեան տօներու
առթիւ ցանկ մը ներկայացուեցաւ
Սուլթանին Պուլկար բանտարկեալ-
ներու — որոնք Մակեդոնիոյ զա-
նազան բանտերու մէջ կը գտնուին —
մի քանիսն շնորհն ստորագրելու:
Բայց հազիւ թէ Բ. Գրան առա-
ջին քարտուղար Ալի Եւսուֆ է-
ֆէնտի երկու բառ ըսած էր, Սուլ-
թանը անմիջապէս անոր ձայնը
կըտրեց՝ եւ պատուիրեց որ այդ
պուլկար ապստամբներու դատն
անմիջապէս տեսնուի եւ այնպէս
խիստ պատիժներ տրուին անոնց
որ ուրիշներուն իբր դատ ծառայէ:

— Պալատին մէջ տեսնուած հա-
շիւէ մը կը տեսնուի թէ գահակա-
լութեան տարեգրաւթ տօներուն
առթիւ մօտաւորապէս երկու մի-
լիոն թրքական լիւրա (այո՛՛ երկու
միլիոն ոսկի!) այսինքն քառա-
սուն եւ հինգ միլիոն ֆրանք ծախ-
սուած են լուսաւորութեանց, հրա-
խաղութեանց եւ նուագածութեանց
համար: !:

— Այս միջոցին ամենուն խօ-
սակցութեան նիւթն է Սուլթանի
երեք հաւատարիմ ծառայներուն
վէզիրութեան (փաշայի տիտղոսով)
բարձրանալը: Ատոնք են՝ սենե-
կապետ Հաճի Ալի-Պէյ, առաջին
քարտուղար՝ Թահսին-Պէյ եւ երկ-
րորդ գլխաւոր պետ իզլէթ-Պէյ:
Այս երեք անձնաւորութեանց ազ-
դեցութիւնը շատ մեծ է պալատին
մէջ, անոնք որ այս երեքէն մե-
կուն հետ լաւ յարաբերութեան
մէջ էին կրնային ամենայն ինչ
յուսալ, ամէն շնորհք, ամէն հրա-
ման, շքանշան, տիտղոս անոնց
ձեռքով կը տրուէր:

Սակայն հակառակ այս երեք
անձներու ունեցած ահագին վար-
կին, ոչ ոք չէր մտածեր թէ ա-
նոնք — եւ երեք միասին — վէզիրու-
թեան պատուին պիտի արժանա-

նան: Մանաւանդ որ այս երեքը
միշտ իրարու հակառակորդ կամ
աւելի ճիշդ՝ իրարու նախանդ-
ներ եղեր են: Սուլթանը չէր կըր-
նար մէկը բարձրացնել առանց
միւս երկուքին նախանձին տեղի
տալու, ուստի երեքը լէկէն փա-
շայութեան աստիճանին բարձրա-
ցուց: Պէտք է խոստովանիլ նաեւ
որ փառիշահը չափէն աւելի կը
վախնայ այս երեք անձներէն, ու-
րովհետեւ, այսպէս ասած, իր
կեանքը անոնց ձեռքին մէջն է,
ուստի շատ մեծ խոհեմութեամբ
մը Սուլթանը համիտ երեքը միա-
սին գոհացուց, այսպիսով անգամ
մը եւս անոնց բարեկամութիւնը
եւ հաւատարմութիւնը շահեցաւ:
Այդ երեք փաշաները Սուլթանի
սենեկին նորատեսակ կերպերոսներն
էին, այսուհետեւ անոնք առաւել
քան երբեք խիստ պիտի լինին
բնականաբար:

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ՕՏԱՐ ՄԱՐԴՈՐՍՆԵՐ

Յունաց Պատրիարքը վերջին օ-
րերս շրջաբերակն կոնդակով մը
կը յատուիրէր Օրթոտոք: Հասա-
րակութեանց որ իրենց զաւակները
օտար կրօնականներու վարժարան-
ներ չը զրկեն, բացատրելով թէ
Եւրոպայէ արտաքսուած այդ կրօ-
նաւորները ուսում տարածելու
պատրուակին տակ մարդորսացողներ
են: Այդ առթիւ յոյն թերթերու
գրածներէն հետեւեալը օգտակար
կը նկատենք մեր ընթերցողաց ու-
շադրութեան ներկայացնել:

«Յոյն եկեղեցւոյ ձայնն ուժգին
տպաւորութիւն մը ըրաւ, եւ ար-
դէն ասկէ նուազ խորին արձա-
գանգ չէր կրնար գտնել այնքան
ուղիղ ու բարեգէպ յորդոր մը:
Խոնդիրը կենսական է: Զգալուն
սրտեր յուզուեցան, եւ դրացի հա-
սարակութիւնք սիրալոյսով փու-
թացին դրուատել Տ. Եօաքիմ
Պատրիարքին որոշումը: Օրթա-
գիւղի Հայ արքեպիսկոպոս Տ. Վահ-
րամ Մանկունի եկեղեցւոյ բեմէն
չերմադինս յանձնարարեց իր հօ-

տին՝ համակերպիլ Տ. Եօաքիմ Պատրիարքին յորդորին, որ արդարեւ մեծ արժէք մը ունի ո՛չ միայն Յոյն ազգին, այլ միւս բոլոր հասարակութեանց համար։ Ամէն մարդու սրբազան պարտականութիւնն է իր հարց աւանդութիւնն անխախտ պահել։ Այն որ չի կատարեր այդ պարտքը, մարդկոչուեալ անարժան է։ Յոյն եկեղեցին՝ պահպանելով մեր հարց կրօնն ու յեղուն, զոր կաշխատինքն քանդել օտար դպրոցները՝ մեծագոյն բարիքներ պահած ու պահ պահած կրկայ։ Փիլիսոփայ ըլլալու հարկ չկայ գիտնալու և հասկնալու համար թէ մարդ ոչինչ է առանց այդ նուիրական բարիքներուն։

Մտուգիւ ինչ կրնայ ըլլալ այն մարդն որ իր ազգութիւնը կը մոռնայ, իր ծագումը կուրանայ։ Մարդ չկրնար ըլլալ ինչ որ չէ։ Ըստ այսմ, Յոյն մը չկրնար փոխուիլ և ըլլալ գերման, գաղղիացի կամ անգլիացի։ Իր ազգէն հեռանալով, մարդ հեռացած կըլլայ ամբողջ մարդկութենէն և կը նմանի այն թափառիկ ցեղերուն որք ազգութիւն չունին։ Մեր մէջ կայ դասակարգ մը որ ինքզինք աշխարհաքաղաքացի կը կոչէ հպարտութեամբ։ Աշխարհաքաղաքացի ըլլալ անարգագոյն բանն է։ Ամէն մարդ իր ազգութիւնը պէտք է պահէ, ինչպէս կը պահէ իր անհատականութիւնը, որովհետեւ անոնք անլուծելի կերպով կապուած են իրարու։ Եւ այսպէս ընելու պարտաւոր է ո՛չ թէ իր ազգին, այլ նոյն իսկ իր անձին համար, եթէ կը յարգէ ինքզինք, Հակառակ պարագան կը ցուցնէ չգոյութիւն նկարագրի, բարոյական ինքնութեան և այն

ամէն առաքինութեանց որոցմով մարդ կրնայ օգտակար անդամ մը ըլլալ իր պատկանած հասարակութեան։ Այն որ իր ազգութիւնը, իր արժանապատուութիւնը կուրանայ, չկրնար առաքինի ըլլալ։ Խնդրին միւս կողմը կայ։ Մաս մը ծնողք կըսեն թէ կեանքի պահանջները կը ստիպեն զիրենք օտար դպրոց դրկել իրենց տղաքը։ Վասն զի անոնք գործնական գիտութիւններու պէտք ունին և գործնական կեանքի մէջ մայրենի լեզուն միայն չը բաւեր։ Ահա այս գաղափարով շատ ծնողք իրենց տղանք օտար դպրոցներ կը դրկեն։ Տ. Եօաքիմ Պատրիարքի նախաձեռնութեամբ պատրաստուած ստոյգ վիճակագր. թիւնէ մը կը տեղեկանանք թէ այն դպրոցներու աշակերտաց մեծագոյն մասն Յոյն են։ Պէտք է ընդունիլ թէ կեանքի հարկեցունցի պահանջներու մասին ծնողներու մէջ բերած առարկութիւնները բոլորովին անարգարանալի չեն, բայց գիտէ՞ք թէ ինչ ըրաւ Հայոց Արքեպիսկոպոսը։ Երբ մի կողմէ պատուիրեց իր հօտին՝ իրենց տղաքը բարձրանալու դպրոցները չըրկել, և յանձնարարեց հետեւիլ Տ. Եօաքիմ Պատրիարքի յորդորին առ իր հասարակութիւնն, միւս կողմէ Հայոց Ս. Պատրիարքէն խնդրեց Հայ դպրոցներու ծրար գիրը բարեփոխել, այնպէս որ Հայ շրջանաւարտը կարենան գործնական գիտութեան մէջ յաջողապէս մրցիլ օտար դպրոցներու շրջանաւարտներուն հետ։ Կըսեն նաեւ թէ Հայ վարժարանը մեր վարժարաններէն աւելի լաւ կազմակերպուած են։ Ահա հրաշալի օրինակ մը որուն պէտք է հետեւինք, ինչպէս մեր Հայ եղբայրներն հետեւեցան մեր Ս. Պատրիարքին

յորդորին։ Կը սպասենք որ Լիզուազիտական վարժարանին բացումը չուկէտ մը ըլլայ մեր կրթական մեթոտին բարեօրոման և պատրիարքական կոնգրէսի ու հասարակութեան մէջ անոր գտած արձագանգը «Հայն բարձրագոյն յանապատի» չըլլան։»

Քօնստանդնուպօլիս
Թարգ. Յունարէնէ

ԻՍԼԱՄԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ ԱՌ ԵՒՐՈՊԱ

(Այս յօդուածը, զոր «Ռելիւ Տէ Ռելիւ» հանդէսը տարածեց ահապէս, և որու վրայ շրջանը ըրած ու ինքնակալ շրջանակներու մէջ զանազան մեկնաբանութեանց առիթ տուած է)։

Ա. Գրիստոնեայ ժողովուրդներ ! Ժամանակ է որ զերբար հասկնանք։ Իսլամին Եւրոպայի դէմ առնուած թիւնը անողոք է։ Մեր միջեւ հաշտութիւն մը գոյացնելու ձգտող դարձաւ որ աշխատանքներէ ետք, մեր օտար միակարգիւնքը սա է որ ձեզի կատենք աւելի շատ քան մեր պատմութեան որեւէ թուականին մէջ։ Այդ քաղաքակրթութիւնը ու յառաջդիմութեան այդ հրաշալիքները որոնք ձեզ այնքան հարուստ ու այնքան մեծազօր ըրին, լաւ գիտցէք որ մենք զանոնք կատենք ու մեր հոգիին բովանդակ դորութեան բըրեւ կը մղենք։ Ինչ բանի վերաբերեւք այս տարօրինակ հակակրթութիւնը։ Ձեր քահանայներն ու ձեր դպրոցականները ձեզի կը պատասխանեն։ — Իսլամութեան վերագրելու է։ Ոչինչ աւելի ճշմարիտ։ Այո՛, միւսլիման կրօնքը այս բացարձակ թշնամութեան մէջ է ձեր յառաջդիմութեանց ամբողջ աշխարհին հետ։

Բայց, չնո՞րհ, բացատրեցէք մեզ թէ ինչպէս կրկայ որ նոյն այս կրօնքով կարող եղած ըլլանք հետաքննելու եւ ուսումնասիրելու յունական, պարսկական, հնդկական բոլոր իմաստասիրութիւնները։ Ինչպէս կրկայ որ նոյն այս կրօնքով կարող եղած ըլլանք արտադրելու ձեռք բերստոնեայ աշխարհի որ եւ է առաքելային չափ ազնիւ նկարագրիներ, խորթափանց մտածողներ, ու այսօր զգուշացնող ետ մղենք ո՛չ միայն, ձեր կրօնական վարդապետութիւնները, այլ ձեր բոլոր գիտութիւնները, ձեր բոլոր արուեստները, ու ամէն բան որ քրիստոնեայ Եւրոպայէ մեզի կը գայ։

Դուք երբեք ճշգրտօրէն չը բնեցիք, երբեք ճշգրտօրէն չը սահմանեցիք մեր միջեւ այդ փոքր փոքր սկզբունքները, ու սակայն հոգ է խնդրոյն էական կէտը։

Եւրոպական գիտութեան ձեզ բացատրել չը կրցածը, Ապտիւլ Հաք խոնարհ Շէյխս, անգամ համիսլամութեան սուրբ Դաշնակցութեան, վերջապէս, մասնաւոր պաշտօնով, ձեզ պաշտօնապէս զրուցելու։ Ձիւս հասկնալ կարողանալու համար, նախ կը հրաւիրեմ ձեզի որ, վայրկեանի մը համար գտնէ, մէկ կողմ թողուք ձեր պայմանագրական գաղափարները այն կրօնքի վերաբերութեամբ, որուն այնքան թիւ կերկով «մահմետական» անունը կուտայ, ու յետոյ գաք ինծի հետ քննելու ծագումը, իմաստասիրութիւնը այն տիեզերական իմացութիւնը զոր «Իսլամ» անունը մեզի կուտայ։ Լաւ միտ դրէք սա կարեւոր կէտը որ խնդիրը հոս այսինչ թուականի կամ այնինչ բնագիրի իսլամին վրայ չէ, ինչպէս ձեր մզլուտած մատենագրաններուն մէջ կ'օտոմնասիրենք, այլ հոս խնդիրը այն իսլամին (իսլամութեան) վրայ է, իրական, գործնական, կենդանի, ինչպէս որ կազ-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (13) ԹԻԱՊԱՐՏԸ ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԻ ՏԻԿԻՆ ՌՕՂԱՅԻ ՏՈՒՆԸ

— Մինա՞կ է։
— Ո՛հ, թիպարտ ընկեր մըն ալ ունի։
— Հա՞յ։
— Այո՛, Պատրիկ անունով, որուն մայրը հոս է։
— Արդեօք սեւեր հագած կին մըն է։
— Ծի՛ղդ է։
— Ո՛հ երկու անգամ է որ կը հանդիպինք իրեն։ Կերպարանքը հայ կնոջ մը կը նմանէր։ Տեսա՞ր, չէինք սխալեր։
— Տէրվիլը նորէն համբուրեց երկու աղջիկներն ու հեռացաւ։
— Լուսիա ու Լաւեզար յուզուած վիճակով մը պարտէզը մտան ու նստարանի մը վրայ ինկան։
— Մեր նպատակին հասանք, քոյրս, մընջեց Լաւեզար, այնպէս չէ։
— Այո՛, ամենաբարին Աստուած առաջնորդեց մեր քայլերը, Լաւեզար, վրայ բերաւ Լուսիա։

Ազատ է վանական... ա՛լ վախճալու բան մը չունինք։
Երկար ատեն խօսեցան ու երազեցին։ Յետոյ ոտքի ելան ու սկսան շրջագայել։
— Կէս օրուան մօտ տիկին Ռօզա եկաւ։
— Ծառ սպասեցի՞ք, չէ՞, հարցուց տիկին Ռօզա՝ մայրական խանդավառութեամբ ձայնով մը։
— Բան մը չկայ... դողդոջած Լուսիա։
— Գիտե՞ս, Լուսիա՛, այսօր քաղաքը սակն ու վրայ եղած է, յարեց տիկին Ռօզա։
— Ինչո՞ւ... ի՞նչ կայ որ...
— Թիարանէն երկու մարդ փախած են ու կը փնտռուին։
— Ինչ աղք են։
— Երկուքն ալ հայ են եղեր։
— Հա՞յ։
— Այո՛։
— Կիտի կրնա՞ն գտնել։
— Ո՛ր կրնան գտնել... թիպարտները սատանաներէն աւելի ճարպիկ են, աղջիկներս, մէյ մը բաց թողուի անոնց օձիքը, ա՛լ կարելի չէ չուքերնին անգամ տեսնել։
— Բայց, տիկին, այդ բերդէն դուրս ո՞վ կարող է փախուստ տալ։
— Ահա՛ հոտ է խնդիրը... կըսեն թէ մեծաւորին մատը կայ մէջը։
— Երբ մեծաւորը գիտէ, ա՛լ ինչու փնտռելու կ'ելնէ։
— Բնական է, որպէս զի հասկցնել չը տայ թէ ինքը կառավարութեան օրէնքներուն դէմ կը գործէ։
— Ա՛խ, տիկին, չեմ հաւատար...

— Ի՞նչու համար։
— Որովհետեւ ես ակնատես եղած եմ հայերու վիճակին... եւ գիտեմ թէ թուրք վարիչներն ինչպէս կը նային անոնց բանտարկեալներու վրայ։ Մանաւանդ՝ որչա՞փ կատեն քրիստոնեաները։
— Իրաւունք ունիս, միայն թէ տեղեւոյ թիարանապետը քու ըսած թուրքերու գնմանիւր։ Ինքը բարի մէյն է ու արագ տէրվիչներու սերունդէն է։
— Լուսիա ո՛ր եւ է առարկութիւն մը չըրաւ... արդէն գիտէր թէ տիկին Ռօզայի ըսածը ճիշդ էր փախուստ տուողը վանականն էր։

ՓԱՐՈՒՍԸ

Արդարեւ, Բարձր. Դուռնէն եկած հրամանի մը վրայ, Լուսիա աղա զղջաց ու պատուիրեց քաղաքապետ զինուորներուն որ անմիջապէս ձերբակալեն երկու թիպարտներն, որոնց ազատութիւնը տուած էր ինքը։
Տէրվիլը հասկցած էր դարձուածքը։ Ուստի, առանց սպասելու, երկու թիպարտները ձգտեալ հազուստով զէպի մօտակայ անտառ մը առաջնորդած էր։
Օ՛հ, տէրվիլին չնորհիւ վերկուած էին վանական

մուկեցաւ մարդկային դարաշրջաններու մէջ. ու ինչպէս որ այսօր կ'ընդունենք իրար ընդմիջող միւսկիւման ժողովուրդներու սրտին մէջ:

Մտիկ բրէք քրիստոնէս' ժողովուրդներ:

Մտիկ ըրէք ճշմարիտ իսլամին ձայնը:

Մտիկ ըրէք մեր միւսկիւման հոգիին հաւատամբը:

«Տիեզերքի մէջ մէկ էակ մը միայն կայ, որ է Աստուած, միակ ազգիւր ամէն գոթութեան, ամէն հմտութեան, ամէն ճշմարտութեան ու ամէն բարութեան:

«Ան մեկէ մը ծնունդ չէ առած մեկու մը ծնունդ չէ տուած:

«Մի, անսահման, յաւիտենական է:

«Ինքը միայն ճանչցուի կամեցաւ տիեզերքը ըրաւ, մարդը ստեղծեց:

«Մարդը շրջապատեց արարչագործութեան համայն շնորհութիւններով ու անոր սահմանեց միայն զինքը պատկերաւ նուիրական պարտականութիւնը:

«Այս միակ Աստուծոյ մշտնջենաւոր պաշտամունքը, մարդուն երկրի վրայ միակ պաշտօնը, միակ նպատակն է:

«Մարդուն հոգին անմահ է ու այս երկրին վրայ կեանքը փորձութիւն մը: Այս աշխարհի մէջ մի, բարի, արդար ու գերագոյր Աստուծոյ անպայման պաշտամունքով, կամօրջի մը վրայէն կանցնինք մշտնջենական կեանքի հասնելու համար:

«Որպէս զի մեր պաշտամունքի կանոններուն մէջ առաջնորդութիւնը, անոր արդարութիւնը կամեցաւ որ իմաստուն ճշմարտ, մարտի, առաքելական կրող մարդկային բերաններ անոր պատուիրանքները մեզ յայտնեն:

«Անոնց քարոզութեամբը մարդս կիւմանայ թէ այս աշխարհի մէջ կայ գերագոյն առաքելութիւն մը ու յետին անարդարութիւն մը:

«Մարդու համար գերագոյն առաքելութիւնը կը կայանայ իր բովանդակ հոգեւոր միակ Աստուծոյ պաշտելու ու անպայման անոր զոհուելու մէջ:

«Յետին անարդարութիւնը կը կայանայ միակ Աստուծոյ մատնելով սուտ Աստուած մը պաշտելու կամ անոր սուտ ընկերակիցներ տալու մէջ:

«Սուտ Աստուած պաշտողը ապերախ հրէշ մը ու տիեզերքի անէծքն է. անոր գէտ կռուիլը, զայն հաւատքի բերելը կամ զայն ոչնչացնելը հաւատացեալի մը կրօնական ամենէն նուիրական պարտքն է:»

Ահա մեր միակ Աստուծոյ պատուիրանքները, անսահման պատուիրանքներ, դաժանատաններու գեղեցկագոյնին ու արդարագոյնին. Դրախտի ու Դժոխքի, անսահման երանութեան ու անարկու պատուհասի վրայ հիմնուած:

Մեր ընկերային դիրքին մէջ ոչ մէկ տարբերութիւն կայ, ոչ քաղաքային, ոչ դիւանագիտական, ոչ ժամանակաւոր, ոչ հոգեւորական, ոչ աշխարհական, ոչ զինուորական, ամէն բան կրօնք է, ամէն բան միւսկիւման է ու միայն միւսկիւման:

Մեր բոլոր գործերը, մեր բոլոր տենջանքները, ուսումնասիրութիւն, առուտուր, ընտանիք, ուղեւորութիւն, պատերազմ կամ խաղաղութիւն միակ իսկաւր մը մէջ կը բովանդակուին:

— Դժոխքի տիգրիսի բացարձակ տիրող ու այդպէսով յաւիտենական երանութեան արժանանալ:

Մեզի համար աշխարհի մէջ միայն հաւատացեալներու ու այլադաստէն կան. հաւատացեալներու համար մէր, գիտութիւն, եղբայրութիւն. այլադաստէններու համար արհամարհանք, զրգուանք, ատելութիւն ու պատերազմ:

Այլադաստէններու մէջ ամենէն զրգուելիներն ու մեղապարտներն աւելի անոնք են, որոնք զԱստուծոյ ճանչնալով մէկտեղ, անոր երկրպետը ազգականութիւններ կը ստեղծեն, անոր զաւակ մը, մայր մը կուտան: Այս աստիճանի հրէշային կուրուքի մը մեզի համար անօրէնութեան բոլոր չափը կանցնէ. այս տեսակ այլադաստէններու մեր մէջ ներկայութիւնը մեր գոյութեան փորձանքն է, անոնց վարդապետութիւնը մեր հաւատքի մարքութեան ուղղակի թշնամանք մը, անոնց հպումը մեր մարմինն համար

պղծութիւն մը ու անոնց հետ որ եւ է յարաբերութիւն մեր հոգիին համար տանջանք մըն է:

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տփղիսի հայ թերթերը վրաց. լոց թերթերուն հետ բուն կերպով վիճարկութեան բռնուած են քանի մը շաբաթէ ի վեր: Վրացիք կրսին թէ կողմասի մէկ քանի գաւառներուն մէջ գտնուող այն հայերը՝ որոնք իրենց մայրենի լեզուն կորսնցուցած ըլլալով վրացերէն կը խօսին, ազգաւ վրացի են, իսկ կրօնքով Լուսաւորչական եղած են հայ կղերին յարաբերութիւնը: Նոյնպէս վրացի խմբագիրներ կը պնդեն թէ այդ գաւառներու հայրց վանքերը պէտք է վրացաց դարձնել, քանի որ կրօնափոխութիւնը այդ վանքերու հաստատութիւնէն յետոյ եղած է:

Ուրախ ենք որ ռուսահայ թերթերը պէտք եղած կերպով քաջ պատասխաններ կուտան, այնպէս որ վրացի խմբագիրներ ծիծաղելի չը դառնան:

— Գանձակ գաւառին մէջ գրտնուող Զարեայ վանքին մէջ սպաննուած են վանքին վանահայրը Աստուածատուր վրդ. Տէր Թարութիւնեանց եւ ծառան, վարդապետը 9—10 տեղէն գնդակահար եղած է: Վննութեան ձեռնարկած է ոստիկանութիւնը. այս ոճրին հեղինակները կը կարծուին վսրդապետի թուրք ծառաները, որոնք տարած են անոր ժամացոյցը, հրացանը եւ ուրիշ առարկաներ:

Հանգուցեալը 60 տարեկան էր եւ 23 տարեկանէ ի վեր հաստատուած է եղեր հոն եւ իբրեւ վանահայր, իր տոկուն աշխատութեամբը շնորհուցած է այդ մեծ նաստանը:

— Վեհ. կաթողիկոսը այս օրերս Ս. Էջմիածնէ Տփղիս պիտի երթայ:

— Օրմանեան Պատրիարք քանի մը շաբաթէ ի վեր Երւսղի պալատը կերթեկեկէ առանց իրական արդիւնք մը ձեռք բերել յաջողու. հինգշաբթի օր կրկին գացած է:

— Կեսարիոյ Ս. Կարապետ վանքին մէջ շինուած վարժարանին համար պէտք եղած 750 ոսկիին 308ը միայն հանգանակուած է: Հարուստ կեսարացիներէ շատերը չեն ուզած պէտք եղած կերպով մասնակցիլ:

— Պարտիզակէն մէկ քանի Հայ ընտանիքներ Հայ Հռովմէական եկեղեցւոյ յարելու համար դիմում ըրեր են Սաղըզ-Աղաճի Պատրիարքարանին:

— Բաղէշի Առաջ. Տեղապահը Պատրիարքարան գրած մէկ նամակով կիմացնէ թէ Սղերդի Զը-

ռըքանայ Տէրէպանի գիւղացի Գրիգոր Հարոյեանի մէկ աղջիկը Քիւրտերու կողմանէ բռնութեամբ առեւանգուեր եւ կրօնափոխ եղեր է: Կինը եւ միւս զաւակներն ալ պանդխտութեան մէջ գտնուող Գրիգորէն օգնութիւն չը ստանալով մուրացկանութեան ինկած եւ շատ խղճալի վիճակի մը մէջ կը գրտնուին այժմ:

— Պարսից Շահը վենետիկ գտնուած միջոցին, Միսիթարեան Միսթանութեան Աբբասայր Կիւրեղեան Տ. Իգնատիոս Արքեպիսկոպոսը այցելութիւն տուած եւ սիրալիւր ընդունուած է Շահէն, որ խոստացած է ինքեւ Ս. Ղազարու վանքը այցելել, բայց փոթորիկ ըլլալուն պատճառաւ նաակ նստելու վախցած է: Սակայն յետոյ Ա. Կարգի Առիւծ-Արեգակ պատուանշանը շնորհած է Կիւրեղեան Աբբասօր: Իսկ Նասրէտտին Շահը նոյն պատուանշանի Բ. Կարգը տուած էր նախորդ Աբբասօր Ս. Հիւրիւղեանի:

— Յաւ է մեզ յայտարարել թէ «Վէսէլլօ» հայ թատերական խումբի դերասաններուն մէջ ծագած անհամաձայնութիւնները վերջապէս այդ խումբը երկուքի բաժնեցին: Պէնլեան, Գալոբեան եւ Սեփիւն իրենց տիկիններով «Վէսէլլօ» անունին տակ պիտի շարունակեն գործել: Իսկ Պապեան, Երամեան, Շաքարեան եւ վրթանէս միացած, նոր դերասանահիներ ալ բերել տալով, բոլորովին զատ խումբ մը կը կազմեն:

ԲԱՑ ՆԱՄՈՒԿ

Տեղւոյս Սարգիս եւ Յովակիմ աղա երկուքեակ քաղաքականներուն:

Վաղուց գիտէք թէ թողական խորհրդոյ մը առաջին պարտաւորութիւնն է եկեղեցւոյ պայծառութեան հոգ տանիլ: Սակայն ցաւ ի սիրտ կը տեսնենք որ դուք ցարդ անտարբեր էք մինչեւ իսկ ձեր առաջին պարտուց մասին: Առաջները շաբաթ օրերը Ս. Պատարագ կը մատուցուէր հիմա այդ ալ վերացուած է: Ինչու որ քահանաները կառարկեն թէ ոչ միայն ձայնաւոր չկայ, այլ և կերօն բռնող տղայ մը անգամ չի գար եկեղեցի: Ինչու այս աստիճան անտարբերութիւն եկեղեցական արարողութեան եւ երգեցողութեան մասին. դրամ չկայ, երաժիշտ դասատու մը վարձելու. ո՛ր կերթան արգետք բան, կալի հասոյթները: Ժողովուրդին շնորհ փափաքն եւ օրինական պահանջն է, որ ընդ հուպ բարեկարգէր եկեղեցւոյ արարողութիւնը, կանոնաւորէր, միանգամայն վերջ տալով իւրաքանչիւրին բմացը հաճոյ պողալներուն եւ ալլանդակ գողում գողումներուն:

Վառնա, 10 Սեպտեմբեր

ու Պատրիկ: Կը մնային քաղաքին մէջ երկու մասնականաբաղ աղջիկներ ու պառաւ կին մը:

Եւ որովհետեւ Լուսինի աղա կասկածած չէր տէրվիչին վրայ. այդ պատճառաւ տանայն համարձակութեամբ անոր քով կերթար եւ վերջին պատուէրը տալուն համամիտ կը գտնուէր:

Արդէն Լուսին, Լալիզար եւ Պատրիկ մայրը ներքին հազորակցութեան մէջ էին ու կը սպասէին որ յարմար առիթը գտնեն տէրվիչին հետ փախչելու:

Վերջապէս այդ յարմար առիթը ներկայացաւ:

Իրիկուն մը գաղտնապէս իրարու մօտ եկան ու տէրվիչին առաջնորդութեամբ թիապարտներու գրտնուած անտառը գացին:

Հրէստանի լեռներուն մէջ շաբաթներով թափառելէ ետքը ծովիցերեայ քաղաք մը հասան ու ճարպիկութեամբ մը Յունաստան մեկնող շոգենաւը նետուեցան:

Ազատ էին ամենքն ալ:

ՎԵՐՋ Բ. ՄԱՍԻՆ

Գ. մասը յաջորդով կը սկսիմք

Այսօրվա լուսինը պիտի
բեկխալ կազմէր պետէրի կեան
տեքնիկէրի իւրաքանչիւր :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԵ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

1896 տա Տիարապետը գրեցին իւր
թերթիկի իրաւունքներն տալով էլ-
իւրեքին թաւապի իւրեքն մէմուրի-
յէթտէն թարտ օրընմը, փառաթ
պիւ ախտէն թերթիկ չալեպէ վա-
լի թալին իտիւմիշ օլան ճանիի
մէշնուր Էնիս բաշա պիւր գաշ սէ-
նէտէն պէրու՝ էլիւրիին իտաւա-
սընա գարշը՝ մէմուրիյէթիւն տէ-
վամ իտէրէք, էհալինին թէշէթի-
լէրինն սէպէպիյէթ վէրմէսինտէն
տալար, պաւ տէֆա տալի էլի-
լէր միւթթէթիգէն մէրգոււմն
թարտըն թալեպ իթմիշէր իտի-
Սուլթան Ֆրանսըզ, ինկիւիզ վէ
Աւստրիա էլիւրիինն շէտիտէն վէ
թէշէթիտէն բոթէթիւրիինն գարշը
կէլէմէլուպ, նիհալէթ Էնիս բա-
շալը ալլ իլէ, էէրինն Մէհմուտ էֆ-
նամ պիւրիսին թալին իթմիշ տիւր :

— Սըհիսի գոմիսիօնը Կըր
մըզը Տէնիզտէն կէլէնիւր իշին
գարանթինայը արթըրմը տըր-
եանի 10 կիւնէ թահվիլ իթմիշ
տիւր :

— Տէօրտ առտտ րուս հարպ
վաթօրարը Չանգալէտէն կէ-
շիւմէք մէսէլէսի՝ րուսիանին ար-
զուսը մուճիպ հալլ օլընաճաք կէօ-
րինիօր : Սուլթանըն պիւր մազ
պաթաթը՝ ահտնամէլէր մուճիպ՝
պազը շարթլար իլէ, եանի մէզ-
քիւր վաթօրարտա պուլընաճաք
թօր վէ ճէպհանէնին մըզտարը
թալին իտիւրէք, կէզէպիլէճէ-
կինի պիւրիսին իթմիշ :

— Սթանպուլ րուս էլիսի Մ-
Ջինովիէվ րուսիտան ալտէթի
մինսիպէթի իլէ Սուլթանըն հու-
զուրընա չըգուպ, Չարըն սէլամ-
լարըն թագտիմ իթմիշ, վէ Պալ-
գանտա արաքի գոյը սազլամաք Չա-
րըն արզուարընտան պիւրի օլտը-
ղըն պէյան էլլէմիշ տիւր :

Սուլթան տալի Չարա գալի
տօսթ պուլընտըղըն վէ Մաքէ-
թոնիտա ապալիշի մուհաֆազա
իթմէկէ պիւթիւն գուլվէթի իլէ
չալըշտըղըն վէ տէօրտ հարպ վա-
թօրարըն պօղազտան կէլմէք մէ-
սէլէսի րուսիանըն արզուսը մու-
ճիպ հալլ օլընտըղըն Չարա պիւ-
տիւրմէք իշին Մ- Ջինովիէվէ բէ-
ճէ իթմիշ օլտըղը Սթանպուլտան
պիւրիսին իթմիշ :

— Սթանիքտէն էթիլէն չալէա-
լարա պիւնաէն, Սաթօվ իսմինտէ
պիւր թապիպ Գաթթէրիա ճիվա-
րընտա Գարաֆանկէլի նամ րուս
մէթրօթօլտի էօլտիւրմէլէ գաթթ
իթմիշ իսէտէ մուպաֆաք օլտա-
մըշ վէ էէրտէսթ օլընմը տըր :
Սաթօվըն իւզէրիստէն պուլընան
պիւր մէթրօպտան աւիշըլմըշ քի-
պուլպար գոմիթէսի մէթրօթօլտի
թէլէֆ իթմէք վազիթէսինն աւա
իհալէ իթմիշ :

— Լօրէնտօ վէ թիւպիսի մաթ-
լուպաթընն ալթընճը թագտիտի
հոկտեմբերտէ էօտէնէճէք տիւր :

ՏԱԽԻԼԻՅԵ

Էվվէլէթի նօմէրօմըզտա Մ- Պօ-
րիս Սարաֆօվըն Նիշտէ թուլթու-
մուշ օլտըղը եազմըշ ըտըք : Սըրպ
հիւթիւմէթի մէրգոււմը Պէլկրատա
նազլ իթմիքտէն սօնրա, նիլէթի-
նի թէպտիլ իտէրէք, Սիւրպիտան
չըգմաք շարթլը իլէ աւը սէրպէսթ
պրօրազմը տըր : Մ- Սարաֆօվըն
սօն կիւնիւրտէ վիէննաւտա պուլըն-
տըղը իթպար օլընմը տիւր :

— Սէշնուր րուս ժէնէրալը
գօնթ իկնատիէվ՝ Շըգաւտա իճ-
րա օլընաճաք մանէվրալ- ր ի-
թամ պուլտըզտան սօնրա՝ Սօֆի-
այա տալի զիյարէթ իթմէք իշին
Չարտան մէզուլիլէթ ալմըշ օլտըղը
Բէթրսպուրկտան պա թէլէկրաֆ
պիւրիսին իթմիշ տիւր :

— Պու հալտէ՝ տիկէր րուս գապիթ-
լէրին Սօֆիայա կիթմէլէրինն մէ-
զուլիլէթ վէրիլմէյօր :

— Սօֆիայտան վէրիլէն մալիւ-
մաթ իւզրէ, եարըն սաւաթ Յտէ
գօնթ իկնատիէվ վէ տիկէր րուս
ժէնէրալարը շէհրիմէլէ վաթը օ-
լաճազար : Յէլս. Բըննա Յէրտի-
նանտ հազրէթլէրի վէ վիւքէլա
րէյիսի Մ- Տանէվ միսաֆիլէրի
գապուլ իտալա. էրթէսի կիւ-
նիւ տօղրու Շըգաւտա կիտէճէք
լէր :

— Քէզա ճոււմա կիւնիւ տիկէր
պիւր թագրմ րուս գապիթլէր Պուր-
կազա չըգմալարընտա՝ մալիլէ նա-
զըրը Մ- Սարաֆօվտան գապուլ օ-
լընուպ, պիւր թէլէսիլ Շըգաւտա
տօղրու եօլլարընա տէվամ իտէճէք-
լէր, զիւր իճրաի ալն ճոււմա էր-
թէսի (14 տէ) պաշլայաճաք տըր :

ՄԻԻԹԵՆԷՎԻԻՅԵ

Պէլիգա գրալիցաւ Մարի-
Հանրիէթ-Սինա Սեպտ. 19 տա,
ազլամ սաւաթ 7 1/2 րատտէլէրին-
տէ, թաւամ էսնտընտա պաղթէ-
թէն վէֆաթ իթմի. զէվճի գրալ
Լէօթօլտ Լիւզօն ըլըճալարընտա
պուլընը իքէն գրալիցաւն վէֆա-
թընը տուլուպ էթիլմիշ տիւր :
Միւթէվէթի 66 եաշընտա ըտը-
եան էլալիմ օլմաք իւզրէ թէաթ-
րօլար վէ սալիւր էլլէնէթիսանէլէր
գաթանմը տըր : Պօէր ժէնէրալ-
լար իշին թէրթիպ օլընան նիւմա-

իշիւր տալի թէլէսիլ օլընմը
տըր :

— Աճէմ Շահր րուս մանէվրա-
լարընտա հազր պուլընտը. վէ
Քիւրսթտէ Շահա իգրաճէն քէ-
շիտէ օլընան զիյաֆէթտէ՝ Չար-
վէ Շահ պիւրպիլիինն էօլրու սա-
տէլինն վէ իքի գօշու տէվէթ-
լէրին թէրազը վէ տօսթլըղը նա-
մընա պատէլէր նուշ իթմիլէր,
մուզիգալար Աճէմ վէ րուս մարշ-
լարը թէաէննիւմ էլլէտիլէր : Պիլ-
ալիսէ Շահ Չարըն ըէֆաթաթը
իլէ սթանսիօնա գաւտաթ կիտուպ,
օրատա վէտալաշտըզտան սօնրա
Աճէմիտանա ալտէթ իթմի :

— Լանտէրպանգըն վիէննա սան-
տըքքեարը գաշմըշ օլուպ, հէսապ-
լարընտա 1,259,000 գուրօն նօգ-
սան պուլընմը տըր :

— Հոյսնտանըն իթմիֆաթը
Միւսէլլէսէ իլէ պիւրիլէնէկի պուլն-
տան էվվէլ բէք չօգ կազէթալար
եազմազտա րտար : Խսրիճիէ
նազըրը՝ մէճիստէ՝ պու հաֆաթիսին
էստաթը օլտըղըն պէյան իթմի :

— Յրանսանըն հարպիլէ վէ
պահրիէ, նազըրլարը սօն կիւնիւր-
տէ իրատ իթմիքլէրի նուլթլարտա
մուհարէպէ թէշվիգ իտիճի սէօզ-
լէր սէօլլէտիլէրի սէպէպէ. Ալման
կազէթալարը վէ քէզա պազը Յը-
րանսըզ ճէրիտէլէրի նազըրլարը
թահէր իթմէքտէ տիւրէր : Լիպըր
Բաթըլ տէյօր քի՝ մէճիսի մէպու-
սան աշըլմազտան էվվէլ իքի նազրը
լարըն իսթիֆալարը իսթէնիլէճէք
տիւր :

— Ինկիլթէրատա ճանիլէր արթ-
մազտա տըրլար : 1901 տէ էվվէլէթի
սէնէտէն 193 քիշի տաշա զիյատէ
քիւրէկէ վէ 17,163 քիշի մահպու-
սիլէթէ մահքիւմ օլմըշտը : Լօն
տըրա հապստէլէրիստէ եէր գալ-
մալուպ, 3 — 4,000 մահքիւմէր
սալիւր շէհրիլէրէ կէօլտէրիլմիշ-
լէր :

— Իլիմէր վէ ֆիքիլէր թէրազը
իթմիքճէ ճիւնալէթլէրտէ արթը-
յօր :

— Բէթրսպուրկտան պիւրիլ-
տիկինն պիւնաէն, րուս սինօրընտան
պաշլայուպ Աճէմիտանըն շարգ մէ
մալիքիստէն կէշէրէք Աճէմ քէօր
ֆէզիլէ գաւտաթ թէմտիտ օլընաճաք
չըմէնտըֆէր իսթթընն ինշաթթը
եազընէն պաշլայաճաք տըր :

— Մարթինիքտէն Սեպտ. 1 տէ
չըգմըշ օլան եօլըրլար տաւանըն հա-
լինի բէք տէշէթլի կէօթթէրիօր-
լար : Եանար տաղ սօն տէֆա էվ-
վէլէրիստէն շէտիտ սուրէթտէ ալէֆ-
լէնմիշ օլուպ, Յօր-տը-Յրանն շէհ-
րին տալի տալիմ պաթմաք թէհ-
լիքէսիստէ պուլընտըղըն, պիւ-
թիւն աւանըն քիւլ իլէ էօրթիւլ-
միւշ օլտըղըն վէ տէնիլին 50
մէթրօ գարալա իլէրլէտիկիլէ սէօյ-
լէյօրլար :

ՈՐՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Իսլամ Արնաֆալարըն մանա-
տըրլար պաւտազտա վէ էնվաի

ճիւնալէթ իճրա իթմէքտէ օլտըգ-
լարը Չէթիլէտէն պիւրիլիլիօր :

— Հոկտեմբեր 1 տէ Մաթթիսիա
գօթիլէրին ըսնաւա գալգըշա-
ճազլաւընա տալի մալիւմաթ ա-
լընտըր սէպէպէ, սինօր թիւրք
գօմանտարրիւս իշթիլաթլը
տալրանմաք իշինն էմիլլէր վէրիլ-
միշ օլտըղը Սթանպուլտան պիւրի-
լիլմիշ տիւր :

— Բուս էլիսի Մ- Ջինովիէվ
սօն տէֆա Սուլթանըն հուզուրընա
չըգմալընտա՝ Մաթթիսիա իշին
կիւզէլ պիւր իտարէ թէշէթիլ օլըն-
մաւընն իգթիլալարըն Սուլթանա
թէշէթիտ իթմիշ օլտըղը քէզա Սթան-
պուլտան պիւրիլիլմիշ տիւր :

ՏՕԲԹ. ՍԹ. Թ. ԲՕԲՕՎ

Էպէլիքտէ վէ էրքէք վէ գաւտընա-
րըն ալէաթը թէնսիւլիլէյէ տալի
(ճննդական գործարանաց) տալիլի վէ
խարիճի իլլէթլէրի թէտալիլէ սքէ-
սիալիս պիւր թապիպ օլուպ, Սօն-
թէլիսանը Տարիլիֆիստընտան Պուի-
սօն նամ պիւրիսին միւքաթաթընա
նալիլ օլմըշ տըր :

Շէհրիլիլտէ միւթէմէքին թապիպի
միւմալիլէյէ էլիլէվ Չար Պօրիս սօգա-
ղընտա Տիւպէք-Չէշմէյէ գարշը 807
նօմէրըն իսնէյէ նազլ օլընմը տըր :
Բազար կիւնիլէրի ֆուգարալարը մէճ-
ճանէն թէտալի իտէճէք տիւր : 2-2

ԹԻԻՃՃԱՐԻՅԵ

ՎԱՌՆԱ, 11 Սեպտեմբեր	
ՉԱԽԻԼԻՅԵ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վալիս Լիպ. 57-58 հ.թ. 8.50/ 9.20	
Արապա Լիպ. 53-62 հ.թ. 7.20/10.20	
ԱՐԲԱ,	
Վալիս 100 քիւլ 9.10/ 9.20	
Արապա 45-50 քիւլ հ.թ. 5.20/ 5.80	
ՉԱՎՏԱՐ	
Վալիս 53-54 քիւլ 6.80/ 6.90	
Արապա 7.- / 7.20	
ԲԱՐԻՏԱ, 100 քիւլ 19.20/ 19.30	
ՅԱՍՈՒԼԻՍ 100 քիւլ 14.- / 19.-	
ԵՈՒԼԱՅ	
Վալիս 100 քիւլ 10.- / 10.20	
Արապա հ.թ. 5.20/ 5.60	
Կիւնտէ 700-800 արապա վէ 25-30	
Վալիս կէլմէքտէ տիւր :	
Վալիս մուլմէլէսի ալթուլն ֆը- րանքլէ, արապա կիւմիլլէ : Նարօ- լէս 21 ֆրանք :	
ԲԱՄՈՒԴ	
Վարնա մազալարընտա իւրիք սա- թըլար :	
Ինկիլիլ իւրիլի Ն. 8-14 10.-	
» Ն. 18-24 12.20	
Եէրլի իւրիլի Ն. 8-14 9.60	
Աթըլըն բամաք հօդա 1.80	
Բամաք ֆիլաթլարըն Եիւքսէլմէք- տէ տիւր :	
ՊԱԳԱԼԻՅԵ	
Վարնա բիւզաւընտա պազալիլէ մալիլէրին պու կիւնիլ ֆիլաթլը, ալ- թուլն ֆրանք իլէ :	
ԳԱՀՎԵ 1.55/1.80	
Շէֆէր Նէմցէ 52	
(Քէսմէ) սանտը 29.-	
ԲԻՐԻՆՃ Ճարոն չուլալը 37.- / -	
» Ֆիլիպէ » 34.- / -	
» Ինկիլիլ » 25.50	
» Բիքօն » 52.-	
ԿԱՉ Սանտըր 6.90	
Չէթիլի ՆԱՂՂ քիւլ - .80/ - .95	
ԵՈՒՄՈՒՐԹԱ 100 տաւա 5.20/ 5.40	
ԳՈՒՐՈՒ ԻԻՉԻՍ 30	
ՍԱՐԻՍԻՅԵ	
Նարոլէս 20.50 ֆրանք	
Օսմ. իրաւը 22.80 ալթուլն ֆրանք	
Одговорникъ Н. Драгулевъ	
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна	